ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ 1970—1978 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

Պատմ. գիտ. թեկնածու Դ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ վիմագրության մեջ առանձնակի արժեք են ներկայացնում նաև հիշատակագրային (մեմորիալ) կոթողների արձանագրությունները, որոնցով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհի տարածքը։ Իբրև պատմական սկզբնաղբյուրներ, այդ վկայագրերը հաճախ հազվագյուտ տեղեկություններ են պարունակում ոչ միայն հանգուցյալ անձանց ինքնության կամ կատարած գործերի մասին, այլև արտացոլում են տվյալ ժամանակահատվածի հասարակական-քաղաքական հարաբերությունների իրական պատկերը։ Այս առումով հատկապես ուշագրավ են Սանահնի, Հաղբատի, Գանձասարի, Ամաղուի Նորավանքի և բազմաթիվ այլ պատմաճարտարապետական հուշահամալիրներում գտնվող տոհմական դամբարանատների մակագրությունները։

Ինչպես հայտնի է, Վահանավանքը X—XI դդ. եղել է ոչ միայն հոգևոր և կրթական-մշակութային օջախ, այլև հանդիսացել է Բաղքի Զագիկյան իշխանների, ապա նաև Սյունյաց գահակալների տոհմական դամբարանատունը[1]։ Պեղումների շնորհիվ այստեղ հայտնաբերվել են Վահան Նախաշինողի, Վաչագան իշխանի մայր Խուշուշի, իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի), Ջնանշեր Զագիկյանի և բազմաթիվ իշխանազունների ու հոգևոր գործիչների տապանաքարերը։

Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահի և ենթադրյալ սեղանատան-մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերվեցին մի շարք արձանագրություններ, որոնք առավել ընդլայնում են մեր պատկերացումները միջնադարյան Սյունիքի և, մասնավորապես, Հայոց արևելից կողմանց՝ Աղվանքի պատմական դեմքերի ու դեպքերի մասին։ Նորահայտ վիմագրերում հիշատակված անձերից ոմանք վկայված են XIII դարի ականավոր պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի գրական ժառանգության մեջ։

Այսպես, ենթադրյալ սեղանատան ներսը մաքրելիս ի հայտ եկան շինարարական բնույթի ծավալուն արձանագրության երեք խոշոր բեկորներ, որոնց համադրումը ցույց տվեց դրանց՝ միևնույն բնագրի առանձին հատվածներ լինելու փաստը։ Այդ համոզման են հանգեցնում ոչ միայն պատմական միևնույն անձերի հիշատակությունները, այլև լեզվաոճական ու գրչական առանձնահատկությունները (ուա երկհնչյունի մեջ ու-ի վերածումը վ-ի, կցագրերի

---

1 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւնեաց», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 175 (այսուհետև՝ Ստ. Օրբելյան)։ Այս հարցի մասին տե՛ս Դ. Մ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966—1970), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 10։ Նույնի՝ Новонайденные надписи Ваанаванка. «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1։ Նույնի՝ Ստեփաննոս Օրբելյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4։

2 Վահանավանքի մեծ տաճարի հարավ-արևմտյան հատվածում պեղումներով բացված 22 քմ մակերես ունեցող սենյակը պայմանականորեն անվանում ենք սեղանատուն։

բացակայությունը, նույն բառերի համապատասխանման առկայությունը, տառատեսակների նույնականությունը և այլն)։ Թեև քննարկվող արձանագրության սկիզբն ու միջնամասի առանձին բառակապակցություններ բացակայում են, սակայն դրանք ըստ էության չեն խանգարում բնագրի ամբողջականությունը վերականգնելուն, մանավանդ երբ նմանատիպ բանաձևով սկսվող այլ արձանագրություններ առկա են Վահանավանքում։

Առաջին սալաքարի սկզբնամասն սկսվում է՝ «...ՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՒ...»։ Երկրորդ սալաքարը, որ անշուշտ առաջինի շարունակությունն է, սկսվում է «...ՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ...» կապակցությամբ։ Պատմագիտական գրականությունից հայտնի է, որ «Աղվանից արքա Սևադան» (Սահակ Սևադա I-ի թոռը) ունեցել է և՛ ուստրեր, և՛ դուստրեր, որոնցից Շահանդուխտը, Կատան և Սենեքերիմը (Սենեքերիմ I Սյունյաց թագավոր) իրոք ապրում էին Կապան քաղաքում և այստեղ էլ կնքել են իրենց մահկանացուն։ Եվ քանի որ ՈՒՍԻՆ բառը առանց որևէ կասկածի վերականգնում ենք ԱՄՈՒՍԻՆ, հետևաբար, ՈՒՍՏՐ-ի փոխարեն պետք է վերծանել ԴՈՒՍՏՐ։ Ուրեմն, այս հատվածը առանց երկմտելու կարելի է վերականգնել. [ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ Դ]ՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՒ [ԵՒ ԱՄ]ՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ ՈՐԴԻՈՅ ԱՇՈՏՍԿԱՅ...։ Իբրև կռվան, որ խսկապես այս վերականգնումը ստույգ է և հավաստի, կարող ենք վկայակոչել Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցու հարավային պատի արձանագրության սկզբնամասը, ուր միևնույն կապակցությունը կրկնված է ընդամենը երկու բառի տարբերությամբ «...Ես Շահանդուխտ դուստր Սեւադ/այ Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւ/որի որդո Աշոտկա...»[3]։

Երկրորդ սալաքարի առաջին տողը վերջանում է «Ի ՆԵՂ...» պակասավոր գրությամբ, իսկ առաջին սալաքարի երկրորդ տողը սկսվում է «ԵՒ ԾԱՆՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ» բառերով։ Այս երկու կապակցությունների միջև տրամաբանական է վերականգնել «Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՄԵՐՈՒՄ» բառաշարքը՝ ԲԱՋՈՒՄ[4] արտահայտությամբ հանդերձ։ Այսպիսով, քննարկվող հատվածը կարելի է վերծանել՝ «Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՄԵՐՈՒՄ» «ԲԱՋՈՒՄ ԵՒ ԾԱՆՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ», շարունակելով՝ «ԵՍ ԵՒ ՍԻՐ...», մեծ սալաքարին՝ «ԵԼԻ ՔՈՅՐ ԻՄ...», այսինքն՝ «ԵՍ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ԻՄ [ԿԱՏԱ]...»։

Հաջորդ սալաքարին փորագրված է 3 տող, որոնցից առաջինը վերջանում է «ՋԵԿԵՂԵՑԻՔՍ Ջ...» կապակցությամբ։ Այն հիմք է տալիս ենթադրելու, որ զ-ն, իբրև հայցական հոլովի նախդիր, պահանջում է շինեցաւ բայի համար ուղիղ խնդիր, որպիսին կարող են հանդիսանալ «ԶՍԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԲ ՍԻՈՆ» հատուկ անունները, այսինքն՝ «ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՍԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԲ ՍԻՈՆ» (երկրորդ անվան զ նախդիրը չի կրկնված)։ Եռատող սալաքարի հաջորդ տողը վերջանում է ի-ով, որ նույնպես նախդիր է, և քանի որ երկրորդ տողը սկսվում է «ՈՒԹԻՒՆ ՄԵՋ» կապակցությամբ, առաջարկում ենք վերականգնել «Ի [ՓՐԿ]ՈՒԹԻՒՆ ՄԵՋ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ Յ/ԱՒԻՏԵՆԻՑ ԳՐԻԳՈ...», իսկ մեծ սալաքարին՝ «ՐՈՅ...», այսինքն՝ ԳՐԻԳՈՐՈՅ։ Այպա շարունակվում է՝

---

3 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1961, էջ 138։

4 Կամ անճաչան, անձանձիր և նման բառեր։

«ԵՒ ՍԲ ԱՇԱՇԻՆՆ ԵՒ ՆԱԽԱՎԿԱՅՆ Ի ՔԱ...», եռատող սալաքարի երրորդ տողն սկսվում է «ԻՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ» կապակցությամբ, որ համադրելով մեծ սալաքարի երրորդ տողի հետ՝ կունենանք. «Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՒՐ ՄԵՐՈ ՍԵՆԵՔԱՐԵՄԱՅ...»։ Բնագրի մնացած մասը փորագրված է մեծ սալաքարին։

Այսպիսով, համադրելով սալաքարերի բոլոր բեկորները, կստանանք արձանագրության հետևյալ պատկերը.

[...ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ Դ]ՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՒ [ԵՒ ԱՄ]ՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ ՈՐԴՈՅ ԱՇՈՏԿԱՅ Ի ՆԵՂ[ՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՄԵՐՈՒՄ ԲԱՁՈՒՄ] ԵՒ ԾԱՆՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՍ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ԻՄ [ԿԱՏԱ] ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՍԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԲ ՍԻՈՆ Ի [ՓՐԿ]ՈՒԹԻՒՆ ՄԵՋ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ Յ[ԱՒԻՏԵՆԻՑ ԳՐԻԳՈ]ՐՈՅ ԵՒ ՍԲ ԱՇԱՇԻՆՆ ԵՒ ԶՆԱԽԱՎԿԱՅՆ Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ [ԵՂԲԱ]ՒՐ ՄԵՐՈ ՍԵՆԵՔԱՐԵՄԱՅ ԵՒ ԻՒՐ ՈՐԴՈՅՆ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՆԵՐԿԱՅԻՄՍ ԵՒ ԲԱՐԵԽԱՒՍ ՅԱՊԱԳԱՅՍՆ»։

Արձանագրության թվականը, որ եղել է սկզբում, բացակայում է, սակայն հիշատակված անունների միջոցով կարելի է վերականգնել փորագրության մոտավոր ժամանակը։ Այսպես, «Աղվանից արքա» Սևադայի դուստր Շահանդուխտը, ինչպես կտեսնենք ստորև, մահացել է 1116 թ.[5]։ Աշոտի որդի Գրիգորը (Գրիգոր I Սյունյաց թագավոր, մահ. 1072 թ.) Սմբատ II թագավորի (մահ. 1051 թ.) կրտսեր եղբայրն էր, իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) երկրորդ գահակալ դավակը։ Հիշատակված «քոյր Կատան» մահացել է XI դարի վերջերին կամ XII դարի սկզբին։ Նա թաղված է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահի կենտրոնական հատվածում։ Սենեքերիմը Սյունյաց թագավոր Սենեքերիմ I-ն է, որ հաջորդեց Շահանդուխտի ամուսին Գրիգորին։ Արձանագրության փորագրության ժամանակ նա ողջ է եղել. «...ի քաւութիւն և պահպանութիւն եղբաւր մերո Սենեքարեմայ»։ Սենեքերիմը մահացել է 1094 թ., կամ 1096 թ. և թաղվել է Վահանավանքում։ Ուրեմն՝ արձանագրությունը վիմագրվել է մինչև այդ թվականները։ Ակնարկված է Սենեքերիմի որդիների մասին։ Դրանք չորսն են՝ Գրիգոր (Գրիգոր II Սյունյաց թագավոր, մահ. 1166 թ.[6]), Սմբատ (մահ. 1166 թ.[7]), Սևադա և Կյուրիկե (մահ. 1099 թ.[8])։

Արձանագրության վկայությամբ Շահանդուխտ թագուհին իր քույր Կատայի հետ կառուցել է 4 եկեղեցի՝ Ս. Հարություն, Ս. Սիոն, Ս. Աստվածածին և Ս. Նախավկա։ Այս եկեղեցիներից Վահանավանքի տարածքում գտնվում է Ս. Աստվածածինը (կառուցվել է 1086 թ.)։

Ենթադրյալ սեղանատան արևմտյան լուսամուտին, մեղ անհայտ նորոգումներից մեկի ժամանակ, իբրև բարավոր էր օգտագործվել պարզունակ զբաղախաչով մի ժայռաբեկոր, որի հարթեցրած մակերեսին փորագրված է 8 տողանոց հետևյալ արձանագրությունը.

---

5 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 245։

6 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն. Ողբ և հառաչանք..., Կայկաթա, 1846, էջ 17—18։

7 Նույն տեղում։

8 Գ ր. Գ ր ի գ ո ր յ ա ն, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 89։

Թ[ՈՒԱԿԱՆԻՆ] ՆՂԱ (1042) ՁԿԱՆԳՆ/ՈՂ ՍԲՈ ՆՇ/ԱՆԻՍ ՁՍԱՐԳ/ԻՍ ՆՎԱՍՏ Կ/ՐԱԻՆԱՒՈՐ ՅԻ/ՇԵԱ ՔՍ ԵՒ ՈՂ/ՈՐՄԵԱ ՆՄԱ։

Հիշատակված Սարգիս կրոնավորի ինքնության մասին այլուստ տեղեկություններ չունենք. կարելի է ենթադրել, որ այս հոգևորականը Սյունյաց Սմբատ II թագավորի գահակալության տարիներին եղել է Վահանավանքի միաբանության անդամներից մեկը և վախճանվելուց հետո թաղվել է նույն վանքի գերեզմանոցներից մեկում։ Նորոգումների ժամանակ նրա գերեզմանի վրա կանգնեցված խաչքարը իբրև շինաքար ծառայեցրել են բարավորի փոխարեն[9]։

Սեղանատան փլատակների մեջ պեղումների ընթացքում հայտնաբերվեց երեսպատման կոփածո մի սալաքար (85×60 սմ), որ ուներ հիշատակագրային չորստողանոց հետևյալ արձանագրությունը.

«ՅԻՇԵ[Ս]ՋԻՔ ՁՇԱ/ՀԱՆԴՈՒԽՏ ԱՌ/ԱՋԻ ՁԵՆԼՈՅՆ/ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի»

Հիշատակվածն, անկասկած, Սյունյաց թագուհի Շահանդուխտ II-ն է, Գրիգոր I թագավորի կինը, որի շինարարական գործունեության մասին հիացմունքով է արտահայտվում պատմիչ Ստ. Օրբելյանը։ Շահանդուխտ II թագուհին մահացել է 1116 թ. և թաղվել է Վահանավանքի դամբարանատանը[10]։

Արձանագրության մեջ գրաբարի ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի հոգնակի երկրորդ դեմքով կիրառված յիշեսջիք բայը գրիչը փորագրել է առանց ա-ի։ Նույն իրակությունը նկատում ենք ենթադրյալ սեղանատան հարավակողմում գտնված երկու տապանաքարերի արձանագրություններում։

Առաջինում կարդում ենք.

Թ:Շ:Ծ: (1101) /ՁՈՒԻԹԱ Յ/ԱՂԱԻԹՍ/ ՅԻՇԵՋԻՔ։

Մյուս արձանագրությունն է.

Թվ. :Շ:Ծ:Ա: (1102) ՀԱՅՐ /ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՈ[Ի] ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆ/ՈՐԴ ՈՒԽՏԻՍ ՅԻՇ/ԵՋԻՔ ՅԱՂԱԻԹՍ։

Հիշատակված Զուիթայի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող։ Հավանաբար, նա եղել է Վահանավանքի միաբանության անդամներից մեկը և վախճանվելուց հետո թաղվել է այստեղ։ Երկրորդ տապանաքարի հայր Գրիգորը ծնունդով եղել է Երիցուվանքից (Այժմ՝ ՀՍՍՀ Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղ), առաջնորդել է Վահանավանքում («առաջնորդ ուխտիս») և 1102 թ. վախճանվելով՝ թաղվել է այստեղ։

1977 թ. հունիսին մեծ տաճարի հյուսիսային հատվածը պեղելիս հայտնաբերվեց կարմրավուն ժայռաբեկորից կերտված մի խաչքար (140×80 սմ, հաստ. 15—17 սմ, նկ. 1), որի կենտրոնում խոր ակոսներով քանդակված է գծախաչ, իսկ շուրջը եղերում է մեկտողանոց հետևյալ արձանագրությունը.

---

9 1968 թ. երկրաշարժի ժամանակ ենթադրյալ սեղանատան արևմտյան պատը մասամբ փլուզվեց, իսկ խաչքարն ընկավ այս կառույցի սալարկված հատակին։ Այժմ անվնաս վիճակում նույն տեղում է։

10 Ստ. Օրբելյան, էջ 245։

Թվ. ՆՁԲ (1033). ՅԻՇԵԱ ՔՍ ԱԾ ՁՍՏԵՓԱՆՆՈՍ ԵԿԵՂԵՑՊԱՆ[11]։

Վահանավանքի X—XI դդ. վիմագրերում հիշատակված են մի շարք Ստեփանոսներ, սակայն Ստեփանոս կաթողիկոսից բացի ոչ մեկը չի հիշատակված հոգևոր կոչմամբ կամ պաշտոնով։ «Եկեղեցպան» արտահայտությունը վկայում է, որ այս Ստեփանոսը վանահայր է եղել Վահանավանքում XI դարի առաջին տասնամյակներին։

Նկ. 1.

Մեծ տաճարի նույն հատվածը պեղելիս թերթաքարե ժայռաբեկորի վրա հայտնաբերվեց մեկ այլ արձանագրություն. խաչքարի (110×44 սմ, հաստ. 10 սմ) պարզունակ գծախաչի վերին հորիզոնական հարթության վրա թվականն է, ցածում, ձախակողմյան մասում, միջին մեծության տառերով փորագրված է հետևյալ արձանագրությունը.

Թ. ՆԺԴ (965) /ՍՏԵՓ/ԱՆՈՍ/ՅԻՇ/ԵՑԷ/Ք։

Այս Ստեփանոսի վերաբերյալ այլուստ որոշակի տեղեկություններ չունենք, թեև կարելի է ենթադրաբար նրան նույնացնել 957 թ. խաչքարերից մեկի արձանագրության մեջ հիշատակված մեկ այլ Ստեփանոսի հետ։

Վահանավանքի ուշ միջնադարյան գերեզմանոցի տապանաքարերի մեջ 1977 թ. պեղումների ընթացքում գտնվեց մեկ այլ, արտաքնապես անշուք խաչքար՝ կերտված գորշավուն թերթաքարից, որի ճակատային մասը, ուր հավանաբար պետք է լիներ թվականը, եղծված է։ Սակայն աջակողմյան կոտրված բեկորի համադրումից պարզվեց, որ նրա վրա եղած ՆԾԶ (1007) թվականը վերաբերում է միևնույն խաչքարին։ Ուրվագծված եռաստիճան պատվանդանի, ինչպես և ուղղահայաց ստորին խաչթևի աջ և ձախ եզրերին փորագրված է.

Զ/ԱՆ/ԴՐԷ/ԱՍ/ ՔԱՀԱՆԱ ՅԻՇԵ/ԱՅ Ք[ՐԻՍՏՈ]Ս
Թ/Ն/Ծ/Զ/ (1007)։

Նույն տեղամասում, փլատակների մեջ, կամարակապ գավթից մոտավորապես 20 մ հեռավորությամբ ի հայտ եկավ կարմրավուն գրանիտե ժայռաբեկորից կերտված մեկ այլ տապանաքար (120×88 սմ, հաստ. 18 սմ), որի վրա խոշոր տառերով փորագրված է երեք տող.

ԶՎԱՀԱՆԻ/Կ ՅԻՇԵՑԷՔ/ Թ:Շ:Խ:Թ: (1100)։

Հիշատակված Վահանիկը ժամանակագրական առումով ոչ մի առնչություն չունի Վահան Նախաշինողի կամ նրա եղբորորդի Վահան կաթողիկոսի հետ, որի աճյունը 972 թ. ամփոփվել է Վասպուրականի Զորո վանքում։ Ամենայն հավանականությամբ, այս անձը եղել է Սյունիքի աշխարհական իշխանազուններից մեկը, քանի որ թաղվել է Բաղաց աշխարհի տոհմական դամ-

11 Խաչքեների արանքում դժվարությամբ ընթերցվում է «ՈՐ ԿՈՉԻ ԽԱՂՐԱԿ» կապակցությունը, սակայն այս վերծանությունը թեական ենք համարում։

բարանում՝ Վահանավանքում։ Նշելի է Վահան անվան փաղաքշական ձևի կիրառությունը, որ այնքան հաճախակի է Սյունյաց տարածքի, մասնավորապես Վահանավանքի, վիմագրերում։

Հիշյալ սեղանատան հյուսիսային պատը ներսից մաքրելիս գտնվեց մեկ այլ արձանագրություն, փորագրված դեռևս անհայտ խաչքարերից մեկի վերուստ փոսիկավոր ուղղանկյուն-քառանկյուն պատվանդանի վրա։ Ահա դրա գրչագիրը.

Թ[ՈՒԱԿԱՆՆ]:Ն:ՂԸ (1049) ԷՐ. /ՅԻՇԵԱ ՔՍ Զ/ՄՈՒՍԵ՝ ՈՐԴԻ/ ԱԲԼ ԲՇՐԻ, ԵՒ /ՈՂՈՐՄԵԱ Ն/ՄԱ ՏՐ ԱԾ։

Հրապարակվող այս արձանագրությունը ուշադրություն է գրավում առավելապես լեզվաոճական առանձնահատկություններով։ Բանն այն է, որ ողլ *բառը գործածված է հայերեն, իսկ հայրը՝ արաբերեն՝* աբլ *կամ* աբու*։ Ուրեմն՝ հիշատակագրողը խնդրում է հիշել՝ հայր Բշրի որդի Մուսեին (Մովսեսին)։ Այնուհետև՝ Մուսե անվան վերջնահանգ Ե-ն պետք է լիներ Է, իսկ Բշրի ուղիղ ձևը Բշար է*[12]*։*

Աբլ Բշարի (Բշրի) և նրա որդի Մուսեի մասին մատենագրական և վիմագրական տեղեկություններ մեզ հայտնի չեն։ Կարելի է վերապահությամբ կարծել, որ նրանք ծագումով եղել են Հայոց արևելից կողմանից, ուր աբլ *կամ* աբու *հարադրությամբ պահպանվել են մի շարք անուններ (հիշենք Առանշահիկների խիզախ զորապետ Եսայի աբու Մուսեին և այլոց) հատկապես IX դարից։ Ամենայն հավանականությամբ Աբլ Բշրի որդի Մուսեն (Մովսեսը) եղել է Սյունիքի Սմբատ II թագավորի ազատներից և մահվանից հետո թաղվել է Վահանավանքի իշխանական գերեզմանոցում։*

Մեծ տաճարի սյունասրահում հայտնաբերված տապանագրերից մեկը կազմված է ՀՐԱՆՈՇ բառից։ Ուշադրության է արժանի գերեզմանի տեղադրությունը. այն գտնվում է իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) թագակալ որդիներ Սմբատ II-ի և Գրիգոր I-ի տապանաքարերի մեջտեղում։ Հրանոշի (Հրանույշի) ով լինելու առեղծվածը թողնելով ապագային, ենթադրաբար նշենք, որ նա, անտարակույս, եղել է հիշյալ թագավորների մերձավորագույն ազգականուհին, թերևս մայրը, քույրը կամ Սմբատ II-ի կինը։

Որոշակի արժեք է ներկայացնում Սյունիքի Սմբատ II թագավորի տապանաքարը (210×90 սմ)։ Այն գտնվեց մեծ տաճարի սյունասրահի արևելյան հատվածում 1976 թ.։ Հարթ սալաքարին փորագրված է երկու տող (նկ. 2)։

ՍՄՊԱՏ Թ/ԱԳԱՒՈՐ: ԹՎ:Շ: (1051)։

Սա, անշուշտ, Սմբատ II թագավորն է, [illegible]րիգոր I-ի եղբայրը, իշխանաց իշխան Աշոտի ավագ որդին, որը, պատմիչի խոսքերով ասած՝ «կալեալ թագաւորութիւնս ամս ինչ՝ վախճանի և դնի ի Յովհաննու (իմա՝ Վահանու—Գ. Գ.) վանս առ դրան տաճարին»[13]*։ Մենք ունենք որոշակի վկայություններ, որ սա իսկապես Սմբատ II-ն է և ոչ Սմբատ I-ը։ Ստ. Օրբելյանը մատնանշում է, թե որտեղ են թաղված Սմբատ I-ը և նրա որդի Վասակ թագավորը։ «Յաւուրս սորա (Սյունյաց Հակոբ Բ եպիսկոպոսի—Գ. Գ.) վախճանի Սմբատ՝*

---

[12] *Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, Երևան, 1971, էջ 73։*
[13] *Ստ. Օրբելյան, էջ 233։*

Սիւնեաց տէր, որդի Սահակայ, և դնի ի հանգիստ յեպիսկոպոսարանին Տաթևոյ»[14]։ Սմբատ I-ի՝ Տաթևի հանգստարանում թաղվելու պարագան Սյունյաց պատմիչը հաստատում է իր «Պատմութեան» մեկ այլ հատվածում. «Եւ յետ բազում երևելի արքունական գործոց վախճանի (Սմբատ թագավորը—Գ. Գ.) և դնի ի մեծ սրբարանին Տաթևոյ բազում և աշխարհագումար հանդիսիւ»[15]։ Տաթևում է թաղված նաև նրա որդին՝ Վասակ I-ը. «Ապա վախճանի Վասակ թագաւոր և դնի ընդ հօր իւրում Սմբատայ»[16]։



Նկ. 2.

Մեջբերված տեղեկություններն այլևս երկմտելու տեղիք չեն տալիս, որ Սյունյաց առաջին թագակիր Սմբատն ու նրա որդի Վասակ թագավորը՝ Բագրատունյաց թագուհի Կատրամիդեի հայրը, թաղված են եղել Տաթևի վանքում, իսկ Սմբատ II-ն ու նրա հարազատները՝ Կապան քաղաքի սրբունական դամբարանում՝ Վահանավանքում։

Սմբատ II-ի գործունեության վերաբերյալ մեզ են հասել բավականին ընդարձակ տեղեկություններ։ Վաղագույն հիշատակությունը պահպանվել է այժմյան Սիսիանի շրջկենտրոնում գտնվող Սյունի վանքի 1017 թ. փորագրված վիմագրություններից մեկում, ուր նա հանդես է գալիս դեռևս առանց որևէ պատվանունի.

«Թվ. ՆԿԶ (1017)/. Սմբատ որդի տն Ա.շ/ոտո Ս[իւն]եաց իշխանաց/ իշխանի յսղա/ւթս իշեցէք»[17]։

---

14 Նույն տեղում, էջ 213։
15 Նույն տեղում, էջ 220։
16 Նույն տեղում, էջ 233.
17 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, էջ 89։

Երկրորդ վկայությունը վերաբերում է Հայոց 468 (1019) թ., երբ նա իշխան տիտղոսով իր եղբայր Գրիգորի հետ իբրև վկա ստորագրում է Սյունյաց վասակ թագավորի հրամանագիրը. «Ես Սմբատ իշխան վկայ եմ իմ քեռւոյս[18] աստուածապսակ թագաւորիս հրամանացս, զոր չկարէ ոք խախտել»[19]։

Ստ. Օրբելյանը նշում է Սմբատի, ապա նաև Գրիգորի՝ Սյունյաց գահին բազմելու որոշ մանրամասներ։ Ինչպես հայտնի է, Սյունյաց Վասակ թագավորն ուներ միայն մեկ դուստր՝ Կատրամիդե (կամ Կատրանիդե) անունով, որն ամուսնացած էր Գագիկ I Բագրատունի թագավորի հետ։ Եվ քանի որ Սյունյաց տիրակալը «ոչ ունէր ժառանգ տէրութեանն՝ թագաւորեցուցանեն զՍմբատ որդի Աշոտոյ»[20]։ Սյունյաց պատմիչը դրվատանքի խոսքերով է ներկայացնում Սմբատ թագավորին։ «Բայց Սմբատ,— գրում է նա,— առաւել էր քաղցր և հեզահամբոյր և ահարկու յամենայն շրջակայ ազգսն»[21]։ «Շրջակայ ազգսն» ասելով՝ Ստ. Օրբելյանը նկատի ուներ հարևան սելջուկ-թուրքական ամիրայությունները, որոնք պարբերաբար ասպատակություններ էին կազմակերպում առավելապես հայկական իշխանությունների տարածքում։ Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ 1040 թ. Դավիթ Անհողինի վրա արշաված Շադդադյան Աբու-լ-Ասվարի ջախջախմանը, Անիի Հովհաննես-Սմբատ թագավորի միջամտությամբ, Սյունյաց 2000-անոց զորքով մասնակցեց նաև Սմբատ II-ը[22]։ Բնական է, որ հատկապես այս հաղթական արշավանքից հետո ավելի էր բարձրանալու Սյունիքի ռազմաքաղաքական դերը միջֆեոդալական հարաբերությունների ասպարեզում[23]։ Սմբատի օրոք Սյունյաց լեռնաշխարհում ծավալվում են շինարարական աշխատանքները, ծաղկում է ապրում նահանգի հոգևոր կենտրոնը՝ Տաթևի վանքը։ Այս գահակալի աջակցությամբ Հովհաննես մետրապոլիտը շարունակում է ընդլայնել վանական կառույցներն ու կալվածները։ «Յամի յորում էր թ[ուականն] ՆՂԲ (1043),— կարդում ենք Տաթևի վիմագրերում,— ի թագաւորութեան Սմպատա՝ որդո Աշոտո, ես տր Յովանէս շինեցի զսրահս ազնականութեամբ Սմպատա, որ [ա]ղաւթէ յիշեցէք ի ՔՍ»[24]։

1044 թ. վերստին խռովվեց հայոց լեռնաշխարհը. օգտվելով Անիի թագավորության անկումային վիճակից, Արդաբիլի, Ահարի և Թալիշի ամիրայությունների զորքերը ավարառության նպատակով հանկարծակի ներխուժեցին Սյունիք[25]։ Սմբատ II-ը միայնակ անկարող գտնվեց դիմագրավել թշնամուն և խուսափեց ճակատամարտից։ Ասպատակ սփռելով ամենուր, հրոսակների խաժամուժը թալանեց ու հրկիզեց Սյունիքի բնակավայրերը, կործանեց հոգևոր-մշակութային օջախները։

---

18 Վասակ թագավորի քույրն ամուսնացած էր «ի նոյն Սիսական տոհմէ» սերված Աշոտի հետ, որն «էր իշխանաց իշխան ամենայն թագաւորութեանս Սիւնեաց» (Ստ. Օրբելյան, էջ 233). Աշոտը (Աշոտիկը) թաղված է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում։

19 Ստ. Օրբելյան, էջ 224։

20 Նույն տեղում, էջ 233։

21 Նույն տեղում։

22 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 53—54։

23 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Երևան, 1976, էջ 124։

24 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, էջ 19։

25 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, էջ 124։

Հետագայում երկրի վերակենդանացման գործում լայն մասնակցություն են ունենում, ի թիվս այլոց, «և տէր Սմբատ և տէր Գրիգոր»[26], որոնց նյութական աջակցությամբ Հովհաննես մետրապոլիտը ոչ միայն վերակառուցում է Տաթևի վանքը, այլև ավելացնում է վանական միաբանության անդամների թիվը[27]։ Ահա նաև այս ժամանակ է Տաթևի հոգևոր-կրթական կենտրոնն աչքի ընկնում, «անյաղթ փիլիսոփայիւք և աննման երաժշտօք, նաև յոգնապատիկ



Նկ. 3.

արհեստաւորօք»[28]։ 1046 թ. Տաթևի վանքն ամբողջապես վերականգնված էր[29]։ Նույն թվականին հիմնովին վերակառուցվում է Սյունյաց մայրաքաղաք Կապանի ամենախոշոր վանական համալիրը՝ Վահանավանքը, որի մեծ տաճարի հարավային սյունասրահի մեջ առ այսօր պահպանվում է շինարարական բնույթի արժեքավոր հիշատակագրությունը։

Նորահայտ տապանաքարի թվագրության համաձայն Սմբատ II-ը վախճանվել է հայոց Շ (1051) թ.՝ Սյունյաց գահին բազմելով ոչ թե 4—5, այլ 11 տարի։ Այսպիսով, Սմբատ II-ի գահակալության տարիներ պետք է համարել ոչ թե 1040—1044[30], այլ 1040—1051 թթ.[31]։

Սմբատ II-ի տապանաքարի կողքին՝ արևելքից, 1976 թ. հոկտեմբերին հայտնաբերվեց նաև մեկ ուրիշը, նույն կաքմրավուն գրանիտից կերտված ուղղանկյուն սալաքար, որ ունի 6 տողանոց հետևյալ կցագիր արձանագրությունը (նկ. 3)։

ՍՈՓԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱ/ԳՈՒՀԻ ԶՈՔԱՆՉ[32] ԳՐԻԳՈՐ/ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈ Ա/ՇՈՏԿԱ ՄԱՅՐ ՇԱ/ՀԱՆԴԽՏՈ։ ԹՎ[ԱԿԱՆԻՆ] / ՇԼ (1081)։

26 Ստ. Օրբելյան, էջ 230։
27 Նույն տեղում, էջ 229։
28 Նույն տեղում
29 Նույն տեղում, էջ 230։
30 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, էջ 124։
31 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 160։
32 Զոքան՝ բառի վաղագույն հիշատակությունը վիմագրության մեջ։

Տապանագրից որոշակիորեն իմացվում է, որ Սոփին եղել է. ա) Աղվանից թագուհին, բ) Սյունիքի իշխանաց իշխան Աշոտի որդի Գրիգոր թագավորի կոքանը, գ) Շահանդուխտ թագուհու մայրը, դ) մահացել է հայոց ՇԼ (1081) թ.: Ուսումնասիրողներից շատերը, վկայակոչելով պատմական սկզբնաղբյուրները, իրավացիորեն գտնում են, որ «Սոփին եղել է Աղվանից թագավորաղն Սևադայի կինը և Սենեքերիմ I-ի մայրը»: Հր. Աճառյանը այս Սեվադային համարում է «Կապանի թագավոր»[33]. եթե խոսքը վերաբերում է Բաղաց Կապանին՝ ապա նրա ենթադրությունը աղբյուրներով չի հաստատվում: Հայտնի է, որ XI դարի 80-ական թթ. Սևադա Կրտսերը (Սահակ Սևադա I-ի թոռը), հետապնդվելով Խաչեն ներխուժած սելջուկ-թուրքերից, կնոջ՝ Սոփիի հետ ապաստանել էր Սյունյաց մայրաքաղաք Կապանում իր դուստր Շահանդուխտ թագուհու և Սյունյաց գահը ղբաղեցրած Սենեքերիմ որդու մոտ: Նրանց հետ Կապան էր ժամանել նաև Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսը, որի հիշատակագրությունը պահպանված է Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցու արևմտյան մուտքի աջ կողմում ուղղահայաց կանգնեցված կոթողի վրա: Այս արձանագրությունից որոշակիորեն պարզվում է, որ Աղվանքի հոգևոր առաջնորդը Կապան էր եկել «նեղեալ ի Տաճկաց» (իմա՝ սելջուկ-թուրքերից)[34]:

Բ. Ուլուբաբյանն ուշագրավ փաստերի համադրումով պարզել է, որ Սեվադա Կրտսերը Փառիսոսի շուրջ մեկ դար գոյատևած թագավորության գահակալներից էր: Այդ թագավորությունը «խորտակվեց 1048 և 1072 թվականների միջև»[35], Փաղունի արշավանքի ժամանակ: Եվ ահա Փառիսոսի Առանշահիկ տերերը, թեկուզ և ժամանակավորապես, «ստիպված էին լինում հեռանալ իրենց տիրույթներից, ապավինել Արցախին ու Սյունիքին, Ուտիքի լեռնային գավառներին ու Հայաստանի մյուս ապահով նահանգներին»[36]: Ուսումնասիրողի ենթադրությամբ Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը «Բաղաց Կապան է փոխադրվել 1086—1096 թթ. միջև»[37]: Հավանաբար այս ժամանակամիջոցում, կամ դրանից փոքր-ինչ վաղ, Սյունյաց մայրաքաղաք են եկել Խաչենի իշխաններից շատերը, իսկ Սենեքերիմի և Շահանդուխտի ծնողները՝ Սևադա Կրտսերն ու Սոփին, իրենց թագակալ որդու մոտ են ապաստանել XI դարի 70-ական թթ.: Սոփի թագուհու մասին նշված է նրա որդու՝ Սենեքերիմ Սյունյաց թագավորի 1085 թ. հրամանագրերից մեկում, որով կարգադրվում է իր նվիրատվության դիմաց պատարագներ մատուցել «...զքսան օրն թագաւորին Գրիգորոյ՝ որդւոյ Աշոտոյ, և զքսան օրն իմ մօրն Սոփիայ...»[38]:

Սոփիի նորահայտ տապանաքարի արձանագրությունը հնարավորություն է տալիս ամբողջությամբ վերականգնել Վահանավանքի գեղաքանդակ խաչքարերից մեկի եզրերին փորագրված միատող, պակասավոր հիշատակագրությունը, որը նոր վերծանությամբ կունենա հետևյալ պատկերը.

---

33 Հ. Ա ճ ա ռ ե ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 484:

34 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, էջ 139:

35 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 95:

36 Նույն տեղում, էջ 96:

37 Նույն տեղում, էջ 97: Ըստ Ալիշանի Ստեփանոս կաթողիկոսը վախճանվել է 1091 թ. (տե՛ս «Միսական», էջ 296):

38 Սմ. Օրբելյան, էջ 237:

«ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵԱՅ Ի ՔՈ Ի ՄԻԻՍ ԱՆԳԱՄ ԳԱԼԸՍՏԵ[Ա]Ն [ԹԱԳՈՒՀԵԱՅ ՍՈՓԷ] ՄԱՒՐ ՇԱՀԱՆԴԻՏՈ [ՍԵՆԱՔԱՐ]ԵՄԱ ԵՒ ԿԱՏԱՒԻՆ. ԹՎ[ԱԿԱՆԻՆ] ՇԼ (1081)»[39]։

Ինչպես տեսնում ենք, այս խաչքարը կանգնեցվել է Սոփի թագուհու մահվան տարին՝ 1081 թ.։

Սյունիքի յոթ գահակալների ցանկում առանձնակի տեղ է գրավում Սմբատ II-ին հաջորդած Գրիգոր I թագավորը, որի մասին հավաստի տեղեկություններ են պահպանվել մատենագրական և վիմագրական աղբյուրներում։ Նրա տապանաքարը (լայն. 104 սմ, երկարությունը հայտնի չէ, քանի որ արևմուտքից դեռ ծածկված է փլատակներով) գտնվեց սյունասրահի արևելյան հատվածում, «Հրանոշի» դամբարանին կից և ունի միջին մեծության տառերով փորագրված քառատող արձանագրություն (նկ. 4)։



Նկ. 4.

ԹՈՒԱԿԱՆ:Շ:Ի: /Ա: (1072). ԳՐԻԳՈՐ ԹԱ/ԳԱՒՈՐ ՈՐԴԻ/ ԱՇՈՏԿԱ[40]։

Գրիգորի անունն առաջին անգամ հիշատակված ենք տեսնում Սյունյաց Վասակ թագավորի 1019 թ. հրամանագրերից մեկում, ուր նա ավագ եղբայր Սմբատի հետ իբրև նվիրատվության վկա ստորագրում է այդ փաստաթուղթը։ «Ես Գրիգոր որդի Աշոտի իշխանաց իշխանի վկայ եմ իմ քեռւոյս աստուածապա՛հ թագաւորիս հրամանացս»[41], 1040 թ., երբ Սյունյաց գահին բազմեց Սմբատ

39 Արձանագրությունը նախկինում վերծանվել է հետևյալ կերպ. «ՔՍ ԱԾ ողորմեայ ի քո ի միւս անգամ գալըստեան... մաւր Շահանդիտո... եւ Կատաւին» (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ II, էջ 138)։

40 Վահանավանքի պեղումների նախնական արդյունքներին նվիրված մեր հոդվածներից մեկում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 10, էջ 91) նշել ենք, որ իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) կողքին, հյուսիսից, թաղված Գրիգորը նույն ինքը Գրիգոր I թագավորն է, որ հանգչում է հոր անմոտին կից, սակայն, ինչպես տեսնում ենք, նորահայտ տապանագիրը հերքում է մեր նախկին կարծիքը։

41 Ստ. Օրբելյան, էջ 224։

բատ II-ը, Գրիգորը նշանակվեց «իշխանաց իշխան Սիսակտն աշխարհիս»[42]։ Այդ բարձր պաշտոնը նա զբաղեցրեց մինչև 1051 թ., այսինքն՝ եղբոր մահվան տարին, իսկ այնուհետև հռչակվեց Սյունիքի թագավոր[43]։

Ի տարբերություն եղբոր՝ Սմբատ II-ի, Գրիգոր I-ը եղել է մեղմ բաղաքականության կողմնակից և հիմնականում զբաղվել է խաղաղ շինարարական աշխատանքներով։ Դեռևս իշխանաց իշխան եղած ժամանակ, 1046 թ. ամբողջությամբ վերանորոգել է տալիս Վահանավանքը, 1062 թ. արդեն «քրիստոսապսակեալ արքա» Գրիգորը նյութապես աջակցում է Բղենո Նորավանքի առաջնորդներին՝ հիմնովին վերակառուցելու հայ գրչության նշանավոր այս օջախը։ Իր կնոջ՝ Շահանդուխտ թագուհու հետ նա մեծ ուշադրություն է նվիրում Սյունյաց լեռնաշխարհի մշակութային կյանքի զարգացմանը, Սյունյաց թագավորության քաղաքական հիմքի կայունությանը և ամրապնդմանը։

Գրիգոր I-ի տապանագիրը հնարավորություն է տալիս ստույգ թվագրելու նրա գահակալության տարիները. եթե Սմբատ II-ը մահացել է 1051 թ., իսկ Գրիգոր I-ը՝ 1072-ին, նշտնակում է վերջինս գահակալել է 21 տարի (1051—1072 թթ.) և ոչ 44, ինչպես ընդունված էր մինչև վերջերս հայ պատմագիտական գրականության մեջ։ Քննարկվող վիմագիրը հերքում է նաև այն կարծիքը, ըստ որի Գրիգորի հաջորդ Սենեքերիմ թագավորը գահակալել է 1084 թ.։ Իրականում այս թագավորը Սյունյաց գահին է բազմել 1072 թ., Գրիգոր I-ի մահից հետո։

НАДПИСИ ИЗ РАСКОПОК ВААНАВАНКА 1970—1978 гг.

Кандидат историч. наук Г. М. ГРИГОРЯН

(Резюме)

Монастырь Ваанаванк—один из крупнейших духовно-культурных центров средневекового Сюника, в X—XII вв. одновременно являлся усыпальницей престольных князей Дзагикянов, Ашотянов и других правящих домов. О существовании интересующей нас усыпальницы впервые упоминает крупный историк XIII столетия сюникский митрополит Степанос Орбелян. При раскопках последних лет Капанской археологической экспедицией были обнаружены несколько гробниц местных вельмож с эпитафиями. Среди публикуемых здесь надписей особого внимания заслуживают эпитафии сюникских царей Смбата Второго (1040—1051), Григора Первого (1051—1072), царицы Софии (1081 г.), настоятелей монастыря Ваанаванк Степаноса (1033 г.), Григора (1102 г.) и др.

42 Նույն տեղում, էջ 233։

43 Նույն տեղում։

44 «Դիվան հայ վիմագրության», գրքույկ II, էջ 45։